

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
ՏԵՂԱԿԱԼ  
պարոն ՍԱՄՎԵԼ ՆԻԿՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նիկոյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արա Բաբրյանի և Մկրտիչ Մինասյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ անչափահասի ձերբակալման համար նախագծում նախատեսված 48-ժամյա, ինչպես նաև կալանավորման համար նախատեսված 6-ամսյա առավելագույն ժամկետները չպետք է կիրառվեն առանձնապես ծանր հանցագործություններին, ինչպես նաև չափահաս հանցակիցների մասնակցությամբ կատարված հանցագործություններին վերաբերող գործերով:

Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը՝ անհրաժեշտ է նախագծի 2-րդ հոդվածում «պարբերությամբ» բառը փոխարինել «մասով» բառով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագիծը լրանշակման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում  
լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի  
ընդունման դեպքում**

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում  
լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի  
ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ  
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝  
նախագիծ/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության  
գնահատման

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման  
ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի  
նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության  
գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման  
համաձայն:

Գնահատման արդյունքում՝

1. Սոցիալական պաշտպանության բնագավառի ռազմավարական տեսանկյունից  
նախագիծն ունի չեզոք ազդեցություն:

2. Բնագավառի շահառուների վրա ազդեցության տեսանկյունից ունի դրական  
ազդեցություն:

**ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում  
լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի  
վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում  
լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր  
մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի  
«Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում  
կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու  
մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ  
կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**<<Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում  
լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի  
նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. <<Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում  
լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝  
օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի,  
հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ  
պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա  
բացասական հետևանքներ չեն առաջանում:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը  
կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չի  
հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում  
կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության  
համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը  
բացակայում է:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**<<Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում  
լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում  
կարգավորման ազդեցության գնահատման**

<<Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում  
լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի ընդունումը կամ չընդունումը  
բյուջետային բնագավառում թե մուտքերի և թե ելքերի գծով կարգավորման  
ազդեցության չի հանգեցնում:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում  
լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի  
տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում  
կարգավորման ազդեցության գնահատման**

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում  
լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի  
(այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման  
ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է  
մեղադրյալ անչափահասների ձերբակալման և կալանքի տակ պահելու ժամկետներին և  
Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և  
ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում:*

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա զգալի ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ****Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում  
լրացումներ կատարելու մասին**

**ՀՈԴՎԱԾ 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) 441-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 441.1-րդ հոդվածով՝

«Հոդված 441.1. Անչափահասի ձերբակալումը

Սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով անչափահասի ձերբակալումը չի կարող տեւել նրան արգելանքի վերցնելու պահից 48 ժամից ավելի: »:

**ՀՈԴՎԱԾ 2.** Օրենսգրքի 442-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ պարբերությամբ՝

«Քրեական գործով մինչդատական վարույթում անչափահաս մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող գերազանցել 6 ամիսը: »:

**ՀՈԴՎԱԾ 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է քրեական դատավարության ոլորտում երեխաների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ, մասնավորապես, անչափահաս կասկածյալներին, ձերբակալվածներին պահելու վայրերում եւ մեղադրյալներին/ամբաստանյալներին, կալանավորվածներին պահելու վայրերում պահելու տեսողության կրճատման անհրաժեշտությամբ: Հայտնի է, որ 2000 թվականից ի վեր Միավորված ազգերի կազմակերպության երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) Հայաստանի վերաբերյալ իր հանձնարարականներում եւ առաջարկություններում անդրադառնում է անչափահասներին արգելանքի տակ պահելու առանձնահատուկ պայմաններ սահմանելու անհրաժեշտությանը:

Երեխաներին 72 ժամ ոստիկանական արգելանքի տակ պահելը հակասում է Կոմիտեի 2007 թվականի ընդհանուր հանձնարարականին, որում նշված է, որ այն պետք է սահմանվի 24 ժամից ոչ ավելի տեսողությամբ. «Ձերբակալված կամ ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա պետք է 24 ժամվա ընթացքում ներկայացվի իրավասու մարմիններին՝ ազատությունից նրանց զրկելու (դրա տեսողությունը երկարաձգելու) օրինականությունը պարզելու համար» (Կոմիտեի ընդհանուր հանձնարարական թիվ 10, 83-րդ պարբերություն):

Կոմիտեն նույնանման եզրակացության հանգել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ: Այսպես, «անհրաժեշտ է փոփոխություններ կատարել օրենսդրությունում՝ մինչդեռ տակալ վարույթում եւ դատական քննության փուլում անչափահասներին կալանքի տակ պահելու ժամկետը մինչեւ վեց ամիս սահմանափակելու համար, ինչով օրենսդրությունը կհամապատասխանեցվի Երեխայի իրավունքների կոմիտեի հանձնարարականին» (Կոմիտեի ընդհանուր հանձնարարական թիվ 10, CRC/C/GC/10, 83-րդ պարբերություն): ՀՀ օրենսդրությունը նախատեսում է, որ դատարանի որոշմամբ սահմանված կալանավորումը չի կարող տեւել երկու ամսից ավելի (Քրեական դատավարության օրենսգիրք, 138.3 հոդված): Այդ ժամկետը բացառիկ դեպքերում կարող է երկարաձգվել մինչեւ վեց ամիս՝ գործի բարդությունը հաշվի առնելով, կամ մինչեւ մեկ տարի, եթե անձը մեղադրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ (Քրեական դատավարության օրենսգրքի 138.4 հոդված):

Հարկավոր է նշել, որ ԱՊՀ եւ Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի տարածաշրջանի մի շարք երկրներում (Ադրբեջանում, Ալբանիայում, Թուրքիայում, Ուկրաինայում եւ այլուր), այս ուղղությամբ շոշափելի քայլեր արդեն իսկ ձեռնարկվել են՝ որոշ դեպքերում ձերբակալման առավելագույն տեւողությունը սահմանելով 24, երբեմն էլ՝ 48 ժամ: Որոշ դեպքերում այդ ժամկետը կարող է կրճատվել մինչեւ 8 ժամ (Ուկրաինա): Նույնը կարելի է ասել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու ժամկետի սահմանափակումների մասին: Ղազախստանում կալանքի առավելագույն ժամկետը 6 ամիս է, Ադրբեջանում՝ 3 ամիս:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ խորհրդարանը կարելի է երեխայի իրավունքների պաշտպանության խնդիրները, ինչպես նաեւ՝ նպատակ ունենալով կանխել երկարատեւ արգելանքի կիրառմամբ պայմանավորված բռնությունների զգալի ռիսկը եւ կյանքի կոչել ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի հանձնարարականները, առաջարկվում է կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ: